Զորս կողմը ամայի։

Հորիզոնի դէմ, փոքրիկ բարձունքի վրայ, մի վագոն։ Կիսաքանդ, ժանգոտած, գունաթափ, ճանապարհների վրայ լքուած այն վագոններից մէկը, որոնք լքումի մեքամաղձոտ յիշատակն են արթնացնում։

Բիչ աւելի հեռուն, մի տնակ։ Տափակ տանիք, վայտէ սիւներ, ցեխով ծեփուած պատեր։ Դրան առջեւ, հայ մի կին, մաշուած, կոճղի պէս ծակծկուած դէմքով՝ մաքուր թշուառութիւն։

Բարի՛ եկաք։

Սեղանատան մէջ ամերիկեան կոնսերվներ ենք ուտում։ Թէյ, սանվիչ։ Քաղաքավարի, լռակեաց եւ հանդիսաւոր ժպիտներ։ Պատուհանից ներս է մտնում հեռաւոր հորիզոնը եւ իր երկաթէ շղթան բոլորում վզիս շուրջը։ Պատերի վրայ, որբերի, անհամա՞ր որբերի լուսանկարները ծարաւ աչքերով մխրճւում են աչքերիս մէջ։ Կոնսերվի դդալը ձեռքիս մէջ դողում է եւ ակամայ, ամերիկացիներին նայում եմ թշուառի աչքերով։ Բարկութիւնս է գալիս։ Ինչո՞ւ, ես, ստիպուած լինեմ... Հորիզոնի այս ծա՛նր շղթան, որբերի ծարա՛ւ աչքերը։ Գովում եմ Ուիլսոնը, գովում եմ Էդգար Պօն, գովում եմ...

Ամերիկացիները գրամաֆոն ունին՝ նուագում են։

Քամի է։

Սեղը կրճտում է։ Ուրախ մի ճաղ սենեակի մէջ բռնկում է թափուած մազութի նըման։ Նաւաստիներ ադմկալից պար են դառնում, ոտքերը գետին զարնում, պտտում, կանչում։ Ընդմիջում են, դաշտը խուլորէն մայում է եւ ոսկրուտ մատերով պատուհանին զարնում։ Արբաւոր ներս է խուժում, ձիւնոտ ոտքերով։ Ճաղը պոռթկում է, փչրում պղնձէ իր պնակները, պողպատի շուրջ մլաւում՝ անապատի մերկ մսերը դողում են։

Երիտասարդ վարիչը, անհանդիստ ոտքերի վրայ, տատանւում է աջ ու ձախ։ Ինձ մի կողմ է քաշել, պատմում է։ Եւրոպայից նոր է եկել։ Աչքերի մէջ Մոնպարնասը չարլսթըն է պարում։ Նստում ենք բոլոր ծանօթ կաֆէներում։ Լոնտո՞նը՝ չէ՛։ Դիկենսը դեռ ման է գալիս փողոցներում՝ կառապանը, մանր վաճառականը, վարի խաւը։ Տխուր է։ Փարի՛զը, Փարի՛զը։ Աչքով է անում։ Բուլվարների լոյսերի մէջ տրորում է սիրտը, Հալի մօտ թրոչունների աղիքները հոտոտում, թոչնած վարդի համ տուող դիւնները բաց անում։ Ու նոր մի դիսկի հետ, Կոլումբոսը նստում է ճեպընթաց, վազում բոլոր զուարճութիւնների ետեւից։ Գերմանիան այլեւս բացուած ոստրէ է, Բերլինը քունը կորցրել է... Գնացքը ճեղքում է դաշտանկարը, անցնում թրթռող մսերի վրայից, հովահարի նման բաց անում ծռուող ճանապարհները, երկաթների վրայ դղրդալից պար դառնում եւ հսկայ իր լամպարների լոյսերը մխրճում ռուսական հրդեհից մնացած մոխիրների մէջ։

— Փակեցէ՛ք, խնդրեմ, գրամաֆոնը։

Պատերի վրայ երախները մրսում են։ Վիրաւորուած տատրակի նայուածքների մէջ դարերը քնել են։ Սպառած հանքերում աւազը եղունդներ է փչրում։ Անապատը մէջքը արեւին է տուել եւ, երեսը վար, խօսում է անդնդի հետ։

— Փակեցէ՛ք, խնդրեմ, գրամաֆոնը։

* * *

Փոքրիկ մի ֆօրդ տանում է մեզ Որբերի գիւղը։

Վարիչը քշում է ինքնաշարժը։ Ճկուն է, արագ եւ պինդ դնդերով։ Բաց է թողել մեքենան քարացած դաշտի վրայով, եւ անհամար փոսերի ծայրին ցատկոտում ենք։ Ցարական նախկին պաշտօնեան ոտքը ոտքի վրայ է դրել, կաշուէ ձեռնոցներ հագել, հանդիսաւոր դէմք առել։ Գրխարկը իր տեղը չի կենում՝ անդադար ուղղում է։ Տեղից դուրս է ցատկում, պատուհանից բռնում, պատերին կըպչում, բայց աշխատում է դէմքին միշտ հանդիսաւոր կերպարանք տալ։ Գոհ է։ Լռակեաց, մեռելի շրթունքները դոցած, անապատի առջեւ հրճւում է, բացականչում, աւելորդ բաներ ասում՝ կոտրտած ֆրանսերէնով։

Ցուրտ մի հով է փչում, բայց քարերի մէջ թառած, ծանր աւազը աչք չի ծակում, հաղուագիւտ, չորացած մացառները չեն խոկ տատանւում ու, անիւների տակ, հաստ շերտով պառկած լուութիւնը անտարբեր է։

Աւերա՞նք...

Այդ աւերը պողպատէ թոքեր ունի։ Մինչդեռ մեքենան մորթած հաւի նման թպռտում

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան